ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

թիվ 26 -Լ

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎՆ ՈՒ ԿՆՔԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փրկարար ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 14-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել՝

1) փրկարարական ծառայության անցնելու մասին պայմանագիր կնքելու կարգը՝ համաձայն հավելված 1-ի.

2) փրկարարական ծառայության անցնելու մասին պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 2-ի.

3) երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող փրկարարական ծառայողի պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարողի՝

փրկարարական ծառայության անցնելու մասին պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ
03.08.2023թ.

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
Ներքին գործերի նախարարի
2023 թվականի օգոս. 3-ի
N26 հրամանի

ԿԱՐԳ

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ

1. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են փրկարարական ծառայության անցնելու մասին պայմանագիր կնքելու հետ կապված իրավահարաբերությունները:

2. «Փրկարար ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածի 12-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգով սույն հրամանի N 2 հավելվածով նախատեսված փրկարարական ծառայության անցնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) կնքելու համար հիմք է հանդիսանում փրկարարական ծառայության անցնող քաղաքացու (ծառայողի) (այսուհետ՝ Ծառայող) դիմումը:

3. Օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ մասի «դ» ենթակետով, ինչպես նաև 63-րդ հոդվածի պահանջներով սահմանված դեպքում փրկարարական ծառայողի հետ կնքվում է նոր Պայմանագիր՝ համաձայն հավելված 2-ի:

4. Փրկարարական ծառայության անցնելու մասին փրկարարական ծառայողի գործող Պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն 30 (երեսուն) օր առաջ փրկարարական ծառայողը զեկուցագիր է ներկայացնում անմիջական պետին՝ նոր Պայմանագիր կնքելու համար՝ համաձայն Ձև 1-ի և Ձև 2-ի:

5. Նոր Պայմանագիր կնքելու միջնորդություն ներկայացնելուց հետո Պայմանագրի հետագա գործողությունն արգելող՝ Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով,

32-րդ հոդվածի 16-րդ մասով (բացառությամբ՝ «դ» ենթակետի) և 61-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, միջնորդություն ներկայացնող ղեկավարը այդ մասին անհապաղ տեղեկացնում է Փրկարար ծառայության կադրային գործառույթն իրականացնող համապատասխան ստորաբաժանում (այսուհետ՝ Կադրային մարմին), և այդ հիմքերով գործընթացը դադարեցվում է:

6. Օրենքի պահանջներին համապատասխան՝ փրկարարական ծառայության սահմանային տարիքը լրացած ծառայողների՝ ծառայության մեջ գտնվելու ժամկետը երկարաձգելու կարգը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը՝ անհատական իրավական ակտով:

7. Ներկայացված փաստաթղթերի հիման վրա Կադրային մարմինը ստորագրման իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ներկայացնում Պայմանագրի և հրամանի նախագծերը:

8. Սույն Կարգի 3-րդ մասով սահմանված դեպքում Պայմանագիրը ստորագրելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից Պայմանագիրը ստորագրելուց հրաժարվելու դեպքում Կադրային մարմինն այդ մասին Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն 10 (տասն) օր առաջ հայտնում է միջնորդությունը ներկայացնող ղեկավարին և Ծառայողին՝ սահմանված կարգով արձակման համար համապատասխան նյութերն՝ ըստ վերադասության ներկայացնելու նպատակով:

9. Պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ փաստաթղթերը Կադրային մարմնում մուտքագրվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, Կադրային մարմինն ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ստուգում Օրենքի պահանջներին համապատասխանությունը:

10. Այն դեպքում, երբ առաջանում է երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կին ծառայողի պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարողի նշանակման անհրաժեշտություն, Կադրային մարմնում Ծառայողի հետ կնքվում է Պայմանագիր՝ համաձայն հավելված 3-ի, և ներկայացնում Օրենքով ստորագրելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

11. Պայմանագիրը կնքելու վերաբերյալ ստորագրված հրամանները համարակալվում և առաքվում են բոլոր շահագրգիռ ստորաբաժանումներ:

2. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

12. Սույն Կարգով նախատեսված դեպքերում կնքվում է 3-12 ամիս կամ 1-5 տարի ժամկետով Պայմանագիր (բացառությամբ՝ Օրենքի 63-րդ հոդվածով և սույն կարգի 6-րդ և 10-րդ մասերով նախատեսված դեպքերի), որը ստորագրում է՝

1) բարձրագույն և գլխավոր խմբերի պաշտոն զբաղեցնող փրկարարական ծառայողների Պայմանագրերը՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարը.

2) ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողների Պայմանագրերը՝ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալը:

Հավելված N 2
Ներքին գործերի նախարարի
2023 թվականի Օգոստ. 3-ի
N26-Լ հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

«ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

«__» _____202 թ. ք. Երևան

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Մի կողմից Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս՝

_____

(պաշտոնատար անձի պաշտոնը, փրկարարական ծառայության կոչումը)

_____

(անունը, հայրանունը, ազգանունը)

և քաղաքացի (ծառայող)

_____

(քաղաքացու (ծառայողի) անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

_____

(բնակության և հաշվառման հասցեն)

_____

(անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

(այսուհետ՝ Ծառայող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրն (այսուհետ՝ Պայմանագիր) այն մասին, որ Ծառայողը՝ _____ տարի (ամիս) ժամկետով փրկարարական ծառայության է անցնում Նախարարության Փրկարար ծառայության համակարգում:

1.2 Փրկարարական ծառայության ընթացքում կողմերի փոխհարաբերությունները կարգավորվում են «Փրկարար ծառայության մասին» օրենքով, աշխատանքային օրենսգրքով, այլ իրավական ակտերով և սույն պայմանագրով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ծառայողն իրավունք ունի՝

2.1.1. ստանալու «Փրկարար ծառայության մասին» օրենքով սահմանված անվճար հանդերձանք, բուժսպասարկում, ինչպես նաև «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված դրամական բավարարում.

2.1.2. օգտվելու Ծառայողի և նրա ընտանիքի անդամների իրավունքներից, արտոնություններից և սոցիալական երաշխիքներից.

2.1.3. ծանոթանալու իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին.

2.1.4. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.2. Ծառայողը պարտավոր է՝

2.2.1. ծառայության ընթացքում կատարել ՀՀ սահմանադրության, «Փրկարար ծառայության մասին» օրենքի և այլ իրավական ակտերի պահանջները.

2.2.2. անձնական գործում ներառված տվյալների հետագա բոլոր փոփոխությունների մասին համապատասխան փոփոխության օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում անձամբ հայտնել Նախարարության Փրկարար ծառայության կադրային գործառույթն իրականացնող համապատասխան ստորաբաժանում՝ տրամադրելով փոփոխված տվյալները.

2.2.3. կատարել փրկարարական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված և «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պարտականությունները.

2.2.4. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.3. Նախարարությունն իրավունք ունի՝

2.3.1. «Փրկարար ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Ծառայողին նշանակել համապատասխան պաշտոնի (այդ թվում՝ ցածր), ազատել զբաղեցրած պաշտոնից, իջեցնել փրկարարական ծառայության կոչումը և այլն.

2.3.2. «Փրկարար ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներով սահմանված դեպքերում և կարգով Ծառայողի նկատմամբ կիրառել կարգապահական տույժի տեսակներ, վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը.

2.3.3. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.4. Նախարարությունը պարտավոր է՝

2.4.1. Ծառայողին ապահովել «Փրկարար ծառայության մասին» օրենքով սահմանված անվճար հանդերձանքով, բուժսպասարկմամբ, ինչպես նաև «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված դրամական բավարարմամբ և սոցիալական երաշիքներով.

2.4.2. Ծառայողին նշանակել համապատասխան պաշտոնի, ապահովել անհրաժեշտ պայմաններ որակավորման բարձրացման և առաջխաղացման համար, շնորհել համապատասխան փրկարարական ծառայության կոչումներ.

2.4.3. իրականացնել Ծառայողի՝ ծառայության առանձնահատկություններից բխող իրավունքների ապահովումը.

2.4.4. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

3. ՓՐԿԱՐԱՐԱԿՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏՆ ՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

3.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելուց հետո՝ _____

(հրամանն արձակող պաշտոնատար անձը, հրամանի համարը և ամսաթիվը)

_____ հրամանն ուժի մեջ մտնելու պահից՝ _____ ժամկետով:

3.2. Պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում Ծառայողի հետ կարող է կնքվել նոր պայմանագիր:

3.3. Պայմանագրի գործողությունը դադարում է, համաձայն՝ «Փրկարար ծառայության մասին» օրենքով սահմանված փրկարարական ծառայությունում ծառայության տարիքային սահմանափակումների դեպքում:

3.4. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝ «Փրկարար ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

4. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև՝ ըստ վերադասության կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Պայմանագրի խախտման համար կողմերը պատասխանատվություն են կրում «Փրկարար ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներով սահմանված կարգով:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերն ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԾԱՌԱՅՈՂ
_____	_____
(պաշտոնատար անձի կոչումը)	(քաղաքացու (ծառայողի))
_____	_____
(անվան և հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)	(անվան և հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	
«____» _____ 202 թ.	«____» _____ 202 թ.

Հավելված N 3
Ներքին գործերի նախարարի
2023 թվականի հոկտ. 3-ի
N 26-Լ հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԱՐՁԱԿՈՒՐԴՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՊԱՇՏՈՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂԻ՝ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

«ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

«__» _____202 թ. ք. Երևան

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Մի կողմից Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս՝

_____

(պաշտոնատար անձի պաշտոնը, փրկարարական ծառայության կոչումը)

_____

(անունը, հայրանունը, ազգանունը)

և քաղաքացի (ծառայող)

_____

(քաղաքացու (ծառայողի) անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

_____

(բնակության և հաշվառման հասցեն)

_____

(անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

(այսուհետ՝ Ծառայող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրն այն մասին, որ քաղաքացին/ծառայողը փրկարարական ծառայության է անցնում Նախարարության փրկարար ծառայության համակարգում՝ որպես երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող փրկարարական ծառայողի պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող՝ մինչև հիմնական աշխատողի երեխայի խնամքի արձակուրդից վերադառնալը:

1.2. Սույն պայմանագրի գործողության ժամկետը չի կարող երկար լինել, քան օրենքով սահմանված ժամկետը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ծառայողն իրավունք ունի՝

2.1.1. ստանալու «Փրկարար ծառայության մասին» օրենքով սահմանված անվճար հանդերձանք, բուժսպասարկում, ինչպես նաև «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված դրամական բավարարում.

2.1.2. օգտվելու ծառայողի և նրա ընտանիքի անդամների իրավունքներից, արտոնություններից և սոցիալական երաշիքներից.

2.1.3. երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող Ծառայողի արձակուրդից վերադառնալուց հետո դիմել Նախարարության փրկարար ծառայություն՝ իրեն այլ ժամանակավոր հավասարազոր պաշտոնի նշանակելու համար.

2.1.4. ծանոթանալու իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին.

2.1.5. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.2. Ծառայողը պարտավոր է՝

2.2.1. ապահովել զբաղեցրած պաշտոնով նախատեսված և պաշտոնի անձնագրով սահմանված պարտականությունների կատարումը.

2.2.2. փրկարարական ծառայության ընթացքում կատարել Ծառայողի կարգավիճակից բխող իր պարտականությունները, բարձր պահել Ծառայողի պատիվը և բարի անունը, ղեկավարվել ՀՀ սահմանադրությամբ, «Փրկարար ծառայության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով.

2.2.3. կատարել փրկարարական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված և «Փրկարար ծառայության մասին», «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պարտականությունները.

2.2.4. ծառայության ընթացքում կատարել ՀՀ սահմանադրության, «Փրկարար ծառայության մասին» օրենքի և այլ իրավական ակտերի պահանջները.

2.2.5. անձնական գործում ներառված տվյալների հետագա բոլոր փոփոխությունների մասին համապատասխան փոփոխության օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում անձամբ հայտնել Նախարարության փրկարար ծառայության կադրային գործառույթն իրականացնող համապատասխան ստորաբաժանում՝ տրամադրելով փոփոխված տվյալները.

2.2.6. Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.3. Նախարարությունն իրավունք ունի՝

2.3.1. Ծառայողից պահանջել ապահովելու սույն պայմանագրի 2.2-րդ կետով նախատեսված պարտականությունների կատարումը.

2.3.2. վաղաժամկետ դադարեցնել սույն պայմանագրի գործողությունը՝ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող Ծառայողի արձակուրդից վերադառնալու դեպքում: Ընդ որում, երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող Ծառայողի արձակուրդից վերադառնալու զեկուցագրի հիման վրա սույն պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվելու դեպքում Ծառայողը փրկարարական ծառայությունից արձակվում է պայմանագրի ժամկետը լրանալու հիմքով.

2.3.3. սույն պայմանագրի 2.1.3-րդ կետով նախատեսված դեպքերում մերժել Ծառայողին այլ ժամանակավոր թափուր հավասարազոր պաշտոնի նշանակելու զեկուցագիրը.

2.3.4. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.4. Նախարարությունը պարտավոր է՝

2.4.1. ապահովել Ծառայողի իրավունքների, սոցիալական և իրավական երաշխիքների իրացումը.

2.4.2. պայմանագիր կնքելիս երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող Ծառայողի պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակված Ծառայողին տեղեկացնել, որ վերջինս չի կարող օգտվել «Փրկարար ծառայության մասին» օրենքովի 54-րդ հոդվածով սահմանված հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի համար տրվող արձակուրդներից.

2.4.3. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

3. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏՆ ՈՒ ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

3.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելուց հետո՝

_____

(հրամանն արձակող պաշտոնատար անձը, հրամանի համարը և ամսաթիվը)

_____ հրամանն ուժի մեջ մտնելու պահից՝ մինչև հիմնական ծառայողի երեխայի խնամքի արձակուրդից վերադառնալը:

3.2. Սույն Պայմանագրի գործողությունը դադարում է, համաձայն՝ «Փրկարար ծառայության մասին» օրենքով սահմանված փրկարարական ծառայությունում ծառայության տարիքային սահմանափակումների դեպքում:

3.3. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝ «Փրկարար ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

4. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև՝ ըստ վերադասության կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Սույն պայմանագրի խախտման համար կողմերը պատասխանատվություն են կրում «Փրկարար ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներով սահմանված կարգով:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերն ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԾԱՌԱՅՈՂ
_____	_____
(պաշտոնատար անձի կոչումը,	(քաղաքացու (ծառայողի))
_____	_____
(անվան հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)	(անվան հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
	Կ.Տ.
«____» _____ 202 թ.	«____» _____ 202 թ.